ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 02/2024-Վ

ԴԻՄՈՒՄՆ ԱՌԱՆՑ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 06 մարտի 2024թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մ. Գալստյանի, Ա. Փաշինյանի, Լ. Ալեքսանյանի, (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ Արտակ Առաքելյանի դիմումը, **պարզեց**.

Դիմումի բովանդակությունը և պահանջը

1. 2024 թվականի մարտի 4-ին Հանձնաժողովը փոստային առաքմամբ ստացել է ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ Արտակ Առաքելյանի դիմումը:

2. Դիմումատուն նշել է, որ սույն թվականի փետրվարի 28-ին իրեն հանձնված եզրակացությամբ Էթիկայի հանձնաժողովը կատարել է արձանագրում, որ իր կողմից չեն պահպանվել ՀՀ փոխվարչապետի 2022 թվականի հոկտեմբերի 4-ի N 697-Ն որոշմամբ սահմանված քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնների 37-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները:

3. Դիմումատուն խնդրել է իր կողմից ներկայացված բողոքն ընդունել քննության և կայացնել քաղաքացիական ծառայողների Էթիկայի հանձնաժողովի եզրակացությունը վերացնող որոշում:

Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովն ***անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների խախտումների վերաբերյալ էթիկայի հանձնաժողովի եզրակացությունը*** վերանայում է այն հանրային ծառայողի դիմումի հիման վրա, որի վերաբերյալ ընդունվել է եզրակացությունը:

5. Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

Վերանայման դիմումը ներկայացվում է գրավոր: Դիմումում պետք է նշվեն՝

1) հանրային ծառայողի անունը, ազգանունը, հասցեն, զբաղեցրած պաշտոնը.

2) տվյալներ այն պետական մարմնի վերաբերյալ, որի էթիկայի հանձնաժողովի կողմից ընդունվել է եզրակացությունը.

3) էթիկայի հանձնաժողովի եզրակացությունը.

4) հիմնավորումներ սույն օրենքի 36-րդ հոդվածով նախատեսված հիմքերի առկայության մասին.

5) դիմումով ներկայացվող պահանջը.

6) դիմողի ստորագրությունը:

Եթե դիմումը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա պետք է ներկայացվի նաև օրենքով սահմանված կարգով տրված լիազորագիրը:

Դիմումին կցվում են սույն օրենքի 36-րդ հոդվածով նախատեսված հիմքերի առկայությունը հավաստող նյութեր:

6. Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերանայման դիմումը կարող է ներկայացվել *անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների խախտումների վերաբերյալ էթիկայի հանձնաժողովի եզրակացությունն* ստանալու պահից եռօրյա ժամկետում:

7. Օրենքի 38-րդ հոդվածի հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովը դիմումն ստանալու պահից եռօրյա ժամկետում որոշում է ընդունում դիմումը վերադարձնելու կամ **դիմումն առանց քննության թողնելու** կամ դիմումի հիման վրա վերանայման վարույթ հարուցելու մասին: Հանձնաժողովը վարույթ հարուցելուց հետո՝

մեկօրյա ժամկետում, էթիկայի հանձնաժողովին ծանուցում է դրա մասին: Վերանայման վարույթ հարուցելը կասեցնում է էթիկայի հանձնաժողովի եզրակացությունից բխող գործողությունների կատարումը:

8. Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում **դիմումն առանց քննության թողնելու մասին**, եթե՝

1) չի պահպանվել դիմումը ներկայացնելու՝ սույն օրենքով սահմանված ժամկետը, և ժամկետը բաց թողնելը հարգելի չի համարվել.

2) դիմումի քննությունը դուրս է Հանձնաժողովի իրավասությունից.

3) դիմումը ներկայացրել է այդ իրավունքը չունեցող անձը:

9. Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դիմումը վերադարձնելու կամ դիմումն առանց քննության թողնելու մասին որոշման պատճենը Հանձնաժողովը ոչ ուշ, քան այդ որոշումն ընդունելուն հաջորդող օրն ուղարկում է հանրային ծառայողին:

Վերոնշյալ իրավական կարգավորումներից հետևում է, որ Հանձնաժողովն իրավասու է վերանայել *միայն անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների խախտումների վերաբերյալ էթիկայի հանձնաժողովի եզրակացությունները*, իսկ Օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում՝ նաև հարուցել դիմումի հիման վրա վերանայման վարույթ: Մինչդեռ, սույն դեպքում դիմումով հանրային ծառայողը բողոքարկում է ***վարքագծի կանոնների խախտման*** վերաբերյալ էթիկայի հանձնաժողովի՝ իր նկատմամբ կայացված եզրակացությունը:

Համադրելով ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ Արտակ Առաքելյանի կողմից ներկայացված դիմումի բովանդակությունը Հանձնաժողովի գործունեությունը կարգավորող իրավական նորմերի հետ՝ Հանձնաժողովը եզրահանգում է, որ դիմումով ներկայացված՝ ***վարքագծի կանոնների խախտման*** վերաբերյալ էթիկայի հանձնաժողովի եզրակացությունը վերանայելու հարցը դուրս է Հանձնաժողովի իրավասությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը, և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով, 3-րդ մասի 2-րդ կետով, 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Տ

1. ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ Արտակ Առաքելյանի կողմից 2024 թվականի մարտի 4-ին ներկայացված դիմումը թողնել առանց քննության:

2. Սույն որոշումը ոչ ուշ, քան ընդունմանը հաջորդող օրն ուղարկել Արտակ Առաքելյանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**